ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օգնական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Դպրոց- Զեդեայի հիմնական դպրոց

Ուսուցիչ- Թամարա Չիլինգարյան 2-րդ խումբ

Ղեկավար- Մենթոր ուսուցիչ՝ Կ.Օհանեսյան

ՎԱՅՔ 2023

1.Բովանդակություն
Ներածություն
Հետազոտական թեմայի արդիականությունը
Հետազոտության նպատակը
Հետազոտության խնդիրը
2.Գրականություն ակնարկ
Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի հետ՝ որպես սովորողի առաջադիմության և զարգացման նախապայման:
Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության ու դաստիարակության համատեքստում:
3.Հետազոտության ընթացքը
4.Եզրակացություն
5.Ամփոփում(վերլուծություն)
6.Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Մեր ապրած ներկա ժամանակաշրջանը մեծագույն նպատակ ունի կոմպետենցիայով,այսինքն,կարողունակություններով օժտված հայ մարդու:Ձևավորված քաղաքացի,որը պետք է պատրաստ լինի դիմակայելու կյանքի բոլոր դժվարություններին ու փոփոխություններին,կարողանա դիմացինի հետ վերլուծի իրավիճակներ,փոխադարձ համագործակցությամբ մշակի և ծրագրի քայլեր հանուն ազգային գաղափարների և երկրի բարորության:Միմյանց հետ համագործակցումը բացառիկ դեր ունի սովորողի,վաղվա հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման ու առաջընթացի գործում:

Այս պարագայում մշակվում և ամրապնդվում է այն դիրքորոշումը, որ համագործակցումը կարևոր երաշխիք է սովորողի ողջ կյանքում:Հաղորդակցման և համագործակցության միջոցով բացահայտվում են ինքնուրույն դրսևորման հմտություններ:Դա ընդհանրապես կարևոր է գիտելիք ձեռք բերելու համար:

Նաև ձևավորվում է դիրքորոշում հայեցի ոգու,ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար:Այս նաև հնարավորություն է տալիս ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը,ավանդույթները,կենցաղը,նիստուկացը և այլն:

Իմ կարծիքով համագործակցությամբ սովորում են սովորեցնելով,և այդ ընթացքում զարգանում են սովորողի քննադատարար մտածելու, երևակայություն դրսևորելու,ստեղծարարության կարողությունները:

Ուսումնասիրությունների ընթացքում պարզվում է,որ համագործակցությամբ,միմյանց հաղորդակցվելով ու աջակցելով՝ սովորողը ձեռք է բերում գիտելիք,որը կիրառվում է ամբողջ կյանքի ընթացքում:

Այստեղ է, որ սովորողը սովորում է ճիշտ հարաբերություններ ստեղծել,համագործակցել ,մարդկանց հետ,ճիշտ հաղորդակցվել,ստեղծել նյութական և հոգևոր արժեքներ հանուն հայրենի պետականության,հանրության բարորության:Համագործակցության վերջնարդյունքում սովորողը կարողանում է, իմանում է և հասկանում այն,ինչ պահանջվում է իրենից:Համագործակցության մոտիվացիան այն է, որն ամրապնդում է սովորողի կապը իրական կյանքի ու նրա արժեքների հետ:Այստեղ է,որ զարգանում և պահպանվում է սովորողի հետաքրքրասիրությունը, հիացմունքը,առողջ ապրելակերպը,գիտակցված վարագիծը և այլն:

<<Սովորական ուսուցիչը պատմում է:
Լավ ուսուցիչը բացատրում է:
Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս:
Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է>>:

ՈՒ.Ուորդ

Ուսումնական հաստատությունում կրթական ծրագրերը պետք է իրականացվեն ոչ միայն ուսուցչի կողմից:
Երեխան օրվա մեծ մասն անց է կացնում տանը, նրա անհատականությունը ձևավորվում է
ընտանիքում,բայց սա չի նվազեցնում դպրոցի կամ ուսուցչի դերը սովորողի կրթության և դաստիարակության գործում:
Ուրեմն՝ ուսումնառության գործընթացը իրականացվում է դպրոցի և ընտանիքի համագործակցությամբ:Ուսուցիչը և ծնողը պետք է աշխատեն համատեղ,անմնացորդ՝ նվիրված իրենց գործին՝ երեխաների ուսումնառությանը:

Սա պահանջված խնդիր է և ունի արդիական մեծ հնչեղություն:

Սա ոչ թե երկարատև,այլ շարունակական, անընդհատ գործընթաց է:
Ռուս նշանավոր մանկավարժ Սուխումլինսկին ասել է.
<<Ընտանիքում արմատներ են գցվում,որոնցից հետո աճում են ճյուղեր,ծաղիկներ և պտուղներ:
Այդպես էլ դպրոցի մանկավարժական իմաստությունը և իմաստնությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա>>:

Հետազոտական թեմայի արդիականությունը

Սույն թեմայի արդիականացման համար հիմք է հանդիսացել կյանքի մարտահրավերներով լի ժամանակակից շրջափուլում սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնող-ուսուցիչ հաստատուն կապի անհրաժեշտությունը,որը կարող է մեծապես ազդել սովորողի ուսումնառության որակի բարձրացման վրա:
Ուրեմն՝ առաջին պլան է մղվում ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունը,որը նպատակ ունի արմատախիլ անելու ուսումնառության մեջ վատ երևույթները,խորթը՝ անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով,այնուհետև առավելագույնի հասնելու ակնկալումով:Սա է մեր բարձրագույն նպատակը:

Հետազոտության նպատակը

Կապ ստեղծել դպրոցի և սովորողի միջև,որը պետք է լինի անընդհատ:Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին,դաստիարակչական աշխատանքներին,համադպրոցական,արտադասարանային միջոցառումներին,զեկուցումներին,հանդիպումներին, դասախոսություններին և այլն:

Միշտ ցույց տալ ծնող-ուսուցիչ արդյունավետ փոխգործակցությունը սովորողի կրթության և դաստիարակության գործընթացում:

Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի կրթության և դաստիարակության համար:Ունենալ հարուստ նյութատեխնիկական բազա:

Հետազոտության խնդիրը

Ինչպ՞ես ներգրավել ծնողներին ուսումնադաստիարակչական գործընթացին:
Ինչպ՞ես ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթության վերաբերյալ որոշումների կայացման գործին:

Ուսումնական համագործակցություն

Ծնողական զգացումները,անմիջական և ազատ վերաբերմունքը արագացնում են անձի զարգացումը:

Ընտանիքում շփումը տեղի է ունենում անընդհատ,որտեղ դրվում է անհատականության կարևորագույն գծերի դաստիարակությունը:

Սովորողը ստանում է աշխարհի մասին իր առաջին տպավորությունները,պատկերացումները:Միայն ընտանիքում է հնարավոր ստեղծել մշակույթ,սովորույթների պաշար,որը կնպաստի երեխայի կրթության և դաստիարակության գործին:*Երեխայի կյանքի ողջամիտ կազմակերպումն սկսվում է ընտանիքում:*Ընտանիքները շատ տարբեր են,յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու դժվարությունները:Ուստի շատ բան է կախված ուսուցչի հմտությունից՝ ճիշտ որոշումներ կայացնելու և ընտանիքի կապի պահպանման համար:

Երկկողմ կապի շնորհիվ կստեղծվի կրթական առողջ միջավայր,որտեղ սովորողն իրեն կզգա պաշտպանված, դա դրական ազդեցություն կունենա սովորողի առաջադիմության,արժեհամակարգի դրսևորման հաջողությունների և հաղթանակների համար:

Ուսուցիչը պետք է ծնողներին դիտի իբրև գործընկերների,անընդհատ համագործակցի նրանց հետ:Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում :

Մի խոսքով ծնող-ուսուցիչ կապը բանալի է ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպելու համար:Հաճախակի պետք է լինեն հանդիպումներ,ժողովներ,խորհրդատվություններ հետաքրքրաշարժ միջոցառումներ,զրույցներ:

Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության գործում

Հաջողված է այն դասարանը,որի ղեկավարը հաճախակի հրավիրում է ծնողական ժողովներ,ներկայացնում է տեղեկություններ սովորողների առաջընթացի մասին,քննարկում սովորողների հետ կապված ցանկացած հիմնախնդիր,օժանդակում ընտանիքին մոտեցնելու դպրոցին:Մշակում է սովորողների դաստիարակության ձևերն ու մեթոդները:Օգտագործում են նաև ժամանակակից տեխնոլոգիաներ

որոնցով կհասնեն մեծ հաջողությունների:Շատ հաճախ ծնողի կամ ուսուցչի ոչ ճիշտ վարվելակերպը երեխաների մոտ բարդացնում է իրավիճակը:Դրանից խուսափելու համար ուսուցիչը շատ զգույշ պետք է խոսի,վարպետորեն ուշադրություն դարձնի իր խոսքին,նա է,որ մյուս ուսուցիչների աջակցությամբ կարող է բարձր արժանիքներ ձևավորել,լինել հանգիստ,բարեհամբույր,ծնողներին ներգրավել տնային պայմաններում ուսումնական պրոցեսի կազմակերպմանը,

նպաստավոր գործունեություն զարգացնել սովորողների բազմակողմանի դաստիարակության համար, կոնֆլիկտային հարցերը,վեճերը լուծելու առողջ մթնոլորտում:

Ի վերջո, ինչպես Սուխումլինսկին է ասում.
<<Յուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը,և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա>>:Կարծում եմ համոզիչ է սա,այո՛, այս դեպքում կունենանք առողջ մտածելակերպով և հարուստ գիտելիքներով զինված սերունդ:

3.Հետազոտության ընթացքը

Իմ աշխատանքային փորձը ցուց է տալիս ,որ ծնողները,եթե ավելի շատ են ներգրավվում ուսումնական գործընթացին,ամեն ինչ ավելի սահուն է ստացվում:Այն դպրոցը, որտեղ ես աշխատում եմ,աշակերտների թիվը քիչ է, որն ինչ-որ տեղ հեշտացնում է մեր համատեղ աշխատանքը:Ծնողները հաճախակի ինքնակամ այցելում են դպրոց,հետաքրքրվում են իրենց երեխաների առաջադիմության,նաև դժվարությունների մասին,ցանկություն են հայտնում միասին աշխատելու,դժվարությունները հաղթահարելու ուղիներ ձևավորելու համար: Դասալսումներ են անում,լսում իրենց երեխաների պատասխանները,դժվարանալու դեպքում համագործակցում են և ճիշտ լուծում տալիս:

8-րդ դասարանում ունեմ աշակերտուհի,որը լավ է պատմում,վերարտադրում դասը,ունի լավ տրամաբանություն,մաքուր ու ճիշտ լեզվամտածողություն,ստեղծագործական միտքը լավ է, սակայն լավ չի կարդում:Դա շատ էր անհանգստացնում և զարմացնում ինձ:

Լրացուցիչ ընթերցանություն էի հանձնարարում,ծնողի հետ միասին աշխատում էինք երեխայի հետ,ամեն ինչ շտկվեց ժամանակին:Հիմա նա շատ լավ է կարդում,կարդացածը վերլուծում,քննադատում և այլն: Անհատական աշխատանք եմ տանում իր հետ,և դա տալիս է իր դրական արդյունքը:

Ծնողի հետ աշխատանքը ինձ չափազանց օգնեց,և ես դրա համար շատ ուրախ եմ:
6-րդ դասարանում ունեմ մի աշակերտուհի,որն ամբողջ դասն անգիր է անում:Պարզապես չի կարդում,փորձում է հիշողությամբ անգիր անել դասը,դա կլինի արձակ,թե չափածո:
Հետաքրքիրն այն է,որ նոր նյութը,երբ ես հաղորդում եմ,լսում է,տպավորվում է և անգիր ասում:Այս բանը ինձ շատ անհանգստացրեց,երեխան պետք է առաջին հերթին լավ կարդալ սովորի:Ծնողի հետ աշխատեցինք:Տանը մայրը,դպրոցում ես զինվեցինք համբերությամբ:
Թեև դանդաղ, բայց արդյունավետ էր այդ պրոցեսը:Դասի բոլոր բառերը մեկ-մեկ կարդում էր,կապակցում խոսքը, և այդպես շարունակ:Գովելով, ձևավորող բնութագրելով,խրախուսելով հասանք արդյունքի:Ի դեպ կարողանում է կարդացածը գեղեցիկ պատմել:
Կազմակերպվող միջոցառումներին ակտիվորեն մասնակցում են ծնողները,օգնում,ոգևորվում իրենց երեխաների հետ:Միասին էքսկուրսիաներ ենք կազմակերպում,հաղորդակցվում են, շփվում,արժեհամակարգ է ձևավորվում, լինեն իրար օգնող,հանդուրժող,դժվարությունները միասին հաղթահարող:Մի խոսքով, կարող ենք ասել,որ դպրոց-ծնող-ուսուցիչ կապը ավելի ամուր է լինում տարատեսակ բնույթի միջոցառումներ կազմակերպելիս,արշավներ,մրցույթներ կազմակերպելիս,հանդիպումներ,զրույցներ անցկացնելիս և այլն:
Այսինքն, ծնողը ոչ թե պետք է լինի պասիվ հանդիսատես,այլ պետք է դառնա ակտիվ մաս,երեխաների հետ արտասանի,պարի,նախապես մասնակցի փորձերին:Այդ դեպքում տիրում է ոգևորություն,ցնծություն,և յուրաքանչյուրը տվյալ գործի համար յուրովի պատասխանատվություն է կրում:
Շփման արդյունքում ավելի լավ են ճանաչում մեկմեկու՝ աշակերտը դասղեկին,դասղեկը ծնողին:Ես դա զգացել եմ կազմակերպված արշավների,ցերեկույթների ժամանակ:
Միմյանց հետ համագործակցում են,անկեղծանում,ավելի սիրալիր են դառնում և բարյացակամ:

Ծնողները,ուսուցիչները մի պահ տեղափոխվում են մանկություն,որն ամեն մեկի համար կյանքի <<ոսկե շրջան>> է համարվում:Եվ այդ ժամանակ է,որ մշակվում են նրանց մեջ այնպիսի արժեքներ,ինչպիսին են բարությունը, հանդուրժելը, մարդասիրությունը,հարգանքը և այլն:

Հատկապես խմբային աշխատանքները գրականության դասերին նպաստում են սովորող-սովորող,ուսուցիչ-սովորող կապի ամրապնդմանը:Բերենք մեկ դասի օրինակ;երբ խմբային աշխատանքն օգնում է համագործակցությանը,ուսուցիչ-սովորող,սովորող-սովորող կապի ամրապնդմանը:Այստեղ մենք օգտագործում ենք տարբեր մեթոդներ՝ "մտագրոհ", "ձնագնդիկ", " Т-ձև աղյուսակ" և այլն:

Շատ են օգնում նաև "սովորել սովորելով", "ինքնաճանաչողական և սոցիալական պրիզմա" և այլ մեթոդներ:

Խմբային աշխատանքի ժամանակ սովորում են համատեղ,ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները,ինքնակազմակերպվում են և ձևավորում ժամանակի արդյունավոր կառավարման հմտություն:Կարողանում են գնահատել սեփական և մյուսների գործունեությունը,ցուցաբերում են նախաձեռնություն,զգում են պատասխանատվություն և այլն:



Միմյանցից սովորելը,միմյանց համբերությամբ և ուշադիր լսելը նպաստում է նաև «սովորում են սովորելով» կարողունակության զարգացմանը:Աղյուսակների,քարտերի,պաստառների,նկարների օգտագործումը ևս կարևորում են խմբակային աշխատանքի գործունեությունը:

Դասի պլան

12.09.2023

Տևողությունը-45 րոպե

Դասարան- 8-րդ,Զեդեայի հիմն. Դպրոց

Ուսուցիչ- Թ.Չիլինգարյան

Դասի տիպը- նոր նյութի հաղորդման ,ամրապնդման դաս

Դասի թեման-Հովհաննես Շիրազի <<Թագադրում>> բանաստեղծությունը

Դասի նպատակը-ամրապնդել գիտելիքները հայ մեծանուն բանաստեղծի կյանքի և ստեղծագործական ուղու մասին:Ամրապնդել և գարգացնել սովորողի պատկերացումները բանաստեղծությունում պատկերված հայրենի բնության ,հեղինակի զգացողության,նրա ապրումների,հույզերի և սիրո մասին:

Կիրառվող մեթոդները-<<մտագրոհ>>, <<ձնագնդիկ>>, <<պատկերասրահ>>,<<պրիզմա>>:

Դասարանի կահավորումը,դիդակտիկ նյութեր-Շիրազի դիմանկարը,հայ անվանի նկարիչ Մ.Սարյանի կտավներից,համակարգիչ,քարտեր,նվագարկիչ,բանաստեղծությունների ժողովածուն և այլն:

Դասի ընթացքը(խթանման փուլ)-դասարանը,որ պարապում եմ,հենց մի խումբ է 3 հոգիանոց:Մեկին հանձնարարում եմ ներկայացնել կենսագրական տեղեկություններ,մյուսին՝ գաղափար մեծ գրողի ստեղծագործության մասին,վերջինն էլ ամփոփում է ստացած գիտելիքները:

Կիրառում-երգում են գարնան մասին երգեր,կարդում են կամ ասմունքում գարնան մասին բանաստեղծություններ,թղթի վրա նկարում են գարուն:

Կշռադատում-կարդում են դասը,վերլուծում,բանաստեղծությունից դուրս են գրում հատկանիշ արտահայտող բառեր,տրված բառերով կազմում են նախադասություններ:Դուրս են գրում հոմանիշներ,գրում դրանց հականիշները:

Այստեղ զգում են,որ այս բանաստեղծությունը մի իմաստասիրական խոհ է հավերժի ու կատարյալի մասին,զգում են նաև մարդկանց երջանկություն բերելու հավերժության գաղափարը:Գիտակցում են, որ դա բանաստեղծի անձնական հույզերի վերագրումն է համամարդկայինի, որը շատ կարևոր է, այսինքն՝ բանաստեղծի երջանկությունը պայմանավորված է ողջ մարդկության երջանկությամբ:

Վերջնարդյունք-սովորողը կարողանա արտահայտիչ,առոգականությամբ,հուզիչ և տպավորիչ ընթերցել,ապա անգիր ներկայացնել բանաստեղծությունը:Իմանա ստեղծագործության հիմնական գաղափարը,ուսումնասիրի բառապաշարը,առանձնացնի պատկերավոր արտահայտությունները,փորձի բանաստեղծության բովանդակությունը շարադրել արձակ:

Անդրադարձ-հարցեր և առաջադրանքներ

Տնային հանձնարարություն-դասը ընթերցել և վերլուծել,պատասխանել հարցերին:

Գնահատում-գնահատում են իրար,օգնում եմ ես,ուղղորդում,որպեսզի լինեն անաչառ,անկեղծ և արդարացի:

Մոտիվացիա-համագործակցություն

Մեկ ուրիշ դասի պլան

12.09.2023

Տևողությունը -45 րոպե

Դասարան- 7-րդ,Զեդեայի հիմն. Դպրոց

Ուսուցիչ- Թ.Չիլինգարյան

Դասի տիպը- նոր նյութի հաղորդման դաս

Դասի թեման-Գոյական անուն

Դասի նպատակը-ամրապնդել գիտելիքները "գոյական" խոսքի մասի վերաբերյալ:

Զարգացնել սովորողի պատկերացումներն այն մասին ,որ շրջապատում այն, ինչ տեսնում են, այն ինչ գոյություն ունի դրանք առարկաներ են,ասինքն՝ գոյականներ են,պատկերացնել նյութական և վերացական անձնանիշը և իրանիշը՝ ըստ հարցադրումների:

Կիրառվող վեթոդները- "Էքսկուրսիա պատկերասրահում","պրիզմա" և այլն:

Դասարանի կահավորումը-դիդակտիկ, նյութեր,նկարներ,քարտեր,պաստառներ

Դասի ընթացքը- խմբային աշխատանք է տրվում,1-ին խումբ(3հոգի):Մեկին հանձնարարում եմ գրել 5 իրանիշ գոյական և նրանցով կազմել նախադասություններ:2-րդ ին հանձնարարում եմ գրել 5 անձնանիշ գոյական և նրանցով կազմել բառակապակցություններ:

Կիրառում-սահմանում են գոյականը բերում օրինակներ,տրված հատվածից դուրս են գրում գոյականը:

Կշռադատում- տրվում են գոյականներ,որոնցով կազմվում են նախադասություններ,նրանցով կազմվում են այլ բառեր:Հասկանում են գոյ բառի իմաստը,այն,որ կա,տեսնում ենք,շոշափում,զգում:

Վերջնարդյունք-սովորողը կարողանա սահմանել գոյական,իմանա ի՞նչ հարցերի է պատասխանում,տարբերակի անձնանիշը և իրանիշը:

Անդրադարձ- հարցեր,առաջադրանքներ,վարժություններ:

Տնային հանձնարարություն- սովորել դասը,գրել 10 գոյական, նրանցով կազմել նախադասություններ:

Գնահատում- գնահատում են մեկմեկու,փոխադարձ գնահատումը համագործակցելու կարևորագույն միջոց է:

Մոտիվացիա- համագործակցում,աջակցում:

4.Եզրակացություն

Համագործակցությունը ստացված և հաջողակ է համարվում,եթե այն դրական ազդեցություն է ունենում սովորողների կրթական ուսումնառության և դաստիարակության վրա:

Ուսուցչի,ծնողի և սովորողի համագործակցությունը ուսումնառության կարևոր գործընթաց է,նաև բավականին պատասխանատու և ունի արդիական պահանջ:Համագործակցության հիմքում ընկած է սովորողների սովորելու իրավունքի իրականացումը:Այն,որ յուրաքանչյուր երեխա ունի սովորելու,կրթվելու իրավունք:Եվ որ այդ համագործակցությունը մարդկային բարձր որակների վրա է դրված:

Հարկավոր և հնարավոր է հաճախակի ծնողական ժողովներ հրավիրել,որպեսզի մշտադիտարկվեն,քննարկվեն և ուշադրության կենտրոնում պահվեն կրթության շատ խնդիրներ և պահանջներ:Համագործակցողների մեջ պետք է լինի փոխադարձ հարգանք,հանդուրժողականություն,քանի որ նրանք աշխատում են դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորման համար:Ծնողները վստահ պետք է լինեն,որ իրենց երեխաների հետ գործ ունեն որակյալ,կիրթ ու հմուտ ուսուցիչներ ու մասնագետներ:Այսինքն՝ նրանց մեջ պետք է իշխի բարոյահոգեբանական ամուր կապ:Պետք է տիրի առողջ մթնոլորտ,հուսալիություն, արդրություն և օբյեկտիվություն:Կարծում եմ,որ համագործակցության կարգախոսը պետք է լինի <<ոչ՝ արգելքներին և խոչընդոտներին>>,օգտագործվեն հավասար հնարավորություններ և միջոցներ:

Ի վերջո ակնկալվող վերջնարդյունք ամուր համագործակցություն և փոխներգործություն դպրոցի-ուսուցչի-ծնողի և սովորողի միջև:Այստեղ կձևավորվի արժեքների համախումբ,որը նույնպես փոխարարձ կապի արդյունք է:Քանզի արժեհամակարգի ձևավորումը մեր մեծագույն խնդիրն է:

5.Ամփոփում

"Մեր երեխաները մեր ծերությունն են:Նրանց ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է:Ուրեմն՝ պետք է կարողանանք ճիշտ դաստիարակչական միջոցներով ու ձևերով դաստիարակել ու կրթել մեր երկրի համար ապագա կերտողներ":

Ա.Ս.Մակարենկո

Մենք՝ ուսուցիչներս և ծնողները ունենք ընդհանուր նպատակ,և առանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ և հանգիստ:Դպրոցը,ուսուցիչը երեխային տալիս են գիտելիքներ և դաստիարակում ազգային գաղափարներով և արժեքներով:
Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է իր աջակցությունը,օժանդակությունն այդ մեծ ու կարևոր գործընթացին՝ ուսումնառությանը:

Ընտանիքի և դպրոցի համագործակցումը գնահատելով՝ ավելի արդիական և պահանջված է դառնում:

Չնայած մեր ժողովրդի,մեր ծնողների ծանր սոցիալ-հոգեբանական պայմաններին,մեր սովորողների ծնողները բացառիկ դեր են խաղում երեխաների կյանքում,նրանք են կրում դրա զարգացման հիմնական պատասխանատվությունը:Ընտանիքը պետք է լինի համախումբ,համերաշխ և գործի դպրոցի հետ համատեղ:Դպրոցը,մենք՝ մանկավարժներս,ինչպես նաև ծնողները պետք է դառնան գիտության,կրթության շտեմարան ուսուցիչների,ծնողների,սովորողների համար:Եվ այդ շտեմարանը պետք է անընդհատ լցնել ու լցնել:Թեև բոլորս էլ գիտենք այս աշխատանքի դժվարությունները,սակայն պետք է անհնարինը դարձնել հնարավոր:Ուստի կարևոր և առաջնային պահանջ է ուսուցիչ-սովորող-ծնող համագործակցությունը սովորողների կրթության համակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:Ես երդվում եմ,որ կլինեմ այդ կարևոր գործի նվիրյալը և կանեմ ամեն ինչ երեխաների կրթության ու դաստիարակության համար:

Ռուս անվանի մանկավարժ Մակարենկոյի հրաշալի խոսքերը ինձ պարտավորեցնում են և ներշնչում.

-<u>Երեխայի ուղեղը նման է վարդի,իսկ նրա ծայրերը վարդի թերթերի,որոնց այնքան նրբորեն և զգույշ պետք է մոտնալ,որ չվնասվեն:</u>
<u>Սա շատ հնարամտություն է պահանջում մեզանից,որովհետև վնասվելուց հետո չգիտես ինչ կկատարվի:</u>
Այո՛, եկեք ունենանք վարդի նման առողջ ու թարմ ուղեղով երեխաներ,որոնցից է կախված մեր հայրենիքի վաղվա օրը,մեր լուսավոր ու պայծառ ապագան:Եվ վերջում ուզում եմ մի քանի տող նվիրել իմ սաներին:

Սիրում եմ Ձեզ, մեր աշխարհի առողջ,աշխույժ սանիկներ: Դուք նման եք քնքուշ ծաղկի,ունեք ժպտուն աչիկներ,Դուք մեր կյանքի վառ պարտեզի ծաղիկներն եք ու վարդեր,Մեր Հայաստան մեծ աշխարհի մանուշակներ ու զարդեր...

6.Օգտագործված գրականության ցանկ

1."Մանկավարժություն" 2006,2008

2.Համակարգչային տեղեկատվություն

3.Ռուս անվանի մանկավարժներ՝ Ուշինսկու,Մակարենկոյի և Սուխումլինսկու ուսումնասիրություններից,"Մանկավարժություն":

4."Նախաշավիղ" 2001,2002,2003:

5.Սեմյոնով,"Մանկավարժություն":

6.Իմ սեփական դիտարկումները: